

«ՄԱՂԻԿ» ՀԱՆԴԵՍԸ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ԽՄԱԿՐՈՒԹՅԱՄԲ

ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Քանաստեղծ, արձակագիր, քննադատ, հրապարակախոս, հրատարակիչ-լրագրող Արշակ Զոպանյանը սերունդներին է թողել հրապարակախոսական ու գեղարվեստական մեծ ժառանգություն: Այդ ժառանգության արժեքի վավերականն է նաև «Անահիտ» հանդեսը: Բացառիկ է «Անահիտի» դերը հայ մշակութային պատմության մեջ: Գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունն սկսվել է 1898-ին, Փարիզում և ընդմիջումներով շարունակվել մինչև 1949 թվականը: Հրապարակի վրա լինելով շուրջ երեսուն տարի, պարբերականը անփոփարինելի ծառայություններ է մատուցել հայ գրականության ու գեղարվեստի զարգացմանը, մեծապես նպաստել հայ ու եվրոպական ժողովուրդների գրական կապերի ամրապնդմանը, արևմտահայոց ազգային դատի պաշտպանությանը, Սփյուռք-խորհրդային Հայաստան կապի զարգացմանը և այս ամենով հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել յուրահատուկ տեղ:

Մինչև «Անահիտ» հրատարակումը, 90-ական թվականների սկզբին Ա. Զոպանյանը գրական-խմբագրական կարճ, բայց հարուստ ու բեղմնավոր գործունեություն է ունեցել Պոլսում: Այդ շրջանի նրա գործունեության պսակը 1895 թ. խմբագրած «Մաղիկ» հանդեսն է: 1895-ի «Մաղիկը» թե՛ ժամանակակիցների և թե՛ հետնորդների վկայությամբ (Լ. Բաշալյան, Արտ. Հարությունյան, Ռ. Զարդարյան, Յ. Տեմիրճիպաշյան, Հ. Օշական, Ք. Ազատյան, Լեո և ուրիշներ) երևույթ էր ժամանակի պոլսահայ գրական կյանքում:

«Բացառիկ կարևորություն ունի 1895-ին Արշակ Զոպանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մաղիկ» կիսամսյա գրական-ուսումնասիրական հանդեսը, զոր կարելի է համարել, արևմտահայ իմացական զարթման ու վերելքի զորավոր ազդակ մը»,— կենդարյա հեռավորությունից այսպես է գնահատել հանդեսը հասարակական գործիչ, խմբագիր Քորոս Ազատյանը: Իսկ արևմտահայ գրականության սլատմարան, գրող ու քննադատ Հ. Օշականը, հանրագումարի բերելով արևմտահայ գրական կյանքի անցած ճանապարհը՝ գրել է. «Հանդեսի ծրագրումը, գործադրումը կես դար առաջ նորություն, այսօր շին գերազանցված... «Մաղիկը» թվական մըն էր մեր մամուլին տարեգրությանց մեջ»²:

«Մաղիկ» հանդեսը ծրագրային առանձին դրույթներով նախանշում էր և «Անահիտի» հետագա գործունեության և այն լիարյուն, ինքնամոռաց նվիրումի սկիզբը, որ պիտի շարունակվեր վեց տասնամյակից ավելի, վերածվելով մեծագույն մի վաստակի:

19-րդ դարավերջին, համիդյան ծայրահեղ ոճրագործ ուժերի, քաղաքակիրթ կյանքի բրունդատման ահավոր մթնոլորտում արևմտահայոց համար մամուլն էր մեռած հասարակական-մշակութային կյանքի կազմակերպման այն ասպարեզը, ուր կենտրոնանում էին ազգի իմացական ուժերը, հայ մտքի, հայ մտավոր-հասարակական կյանքի տաղանակներն ու հույզերը:

Սակայն, բնականաբար, թուրքական կառավարության բռնակալական սահմանափակումները մեծապես տարածվում են և մամուլի վրա: Արգելվում է թերթի մեկ համարում շտեղավորվող գիտական և գրական հոդվածների տպագրությունը, բազմակետերի օգտագործումը, որովհետև գրանց հաջորդող «շարունակությունը կլինի», «շարունակությունը վաղը» արտահայտությունները իբր վատ կերպով լարում են ընթերցողի միտքը, անհաճո ենթագրությունների տեղիք տալիս:

«...Սրբ Պոլսո գահը բարձրացավ հիվանդ դիշակերը.— գրում է Զոպանյանը,— շար-շարանքի դրությունը սկսավ: Իր հրամանովը հայերեն թատերական ներկայացումները դադարեցան, հայոց պատմության ուսուցումը խստիվ արգիլվեցավ, հավատաքննական գրաքննություն

¹ Ք. Ազատյան, Ժամանակ, հիշատակարան, Կ. Պոլիս, 1948, էջ 36:

² Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, Ծրուսադեմ, 1952, հ. 5, էջ 309, 321:

մը մամուլն ու գրականութիւնը շղթայեց: Հայ մտքին առած արծակ թռիչքն հետո բիրտ խեղ-
դում մըն էր որ տեղի կունենար... Գրաքննությունը բառեր, նյութեր, սեռեր կարգիւր. վերջ ի
վերջոս ոտանավոր գրելը արգիւից»³:

Սակայն, շնայած այս ամենին, հայ մտավորականները համախմբում էին իրենց ուժերը՝
հոգևոր կյանքը արթուն պահելու նվիրական ձգտումներով: Առանձնահատուկ հոգածության ա-
ռարկա է դառնում գրականությունը՝ որպէս զորավիգ ազգային ինքնության, ազգային նկա-
րագրի պահպանման: 90-ականների սկզբին (1891—95 թթ.) նախորդ տասնամյակում սկիզբ
առած իրապաշտ շարժումը, ունենալով քիչ թե շատ արգասավոր շարունակություն, նոր ու ինք-
նատիպ գրեւորումների ուղիներ էր որոնում:

Գրական կյանքի այս նոր ընթացքը իր համար ակունքներ էր փնտրում մի կողմից. եվրո-
պական առաջավոր գրականության մեջ՝ նպատակ ունենալով յուրացնել այդ գրականության
նորագույն հայտնությունները, ընդլայնել հայ մտքի գեղագիտական ընկալումների շրջանակը,
ստեղծել բարձրարժեք գրականություն՝ հաշվի առնելով հատկապես, որ «մեր զավառական
բանաստեղծությունը իր լավագույն կտորներուն մեջ ավելի ճշմարիտ բանաստեղծություն է,
քան ֆրանսական ամբողջ բանաստեղծությունը»⁴: Մյուս կողմից՝ ձգտում կար հայ հնագույն
բանաստեղծության մեջ հայտնաբերելու ցեղի արվեստագետ հոգին, արվեստագետ զգայնու-
թյունը, ժողովրդական բանահյուսության հիմքի վրա զարգացնելու ազգային գույնով ու բույ-
րով ինքնատիպ գրականություն: Գրական այդ նոր շարժման կենտրոնում Արշակ Չոպանյանն
էր, նրա «Մաղիկ» հանդեսը⁵:

Ա. Չոպանյանը, շնայած երիտասարդ, բայց արդեն լայն ճանաչում գտած գրագետ էր, իր
ինքնատիպ արվեստն ունեցող գրող ու քննադատ, որի գրական տաղանդը նրա մի քանի հրա-
տարակությունների առիթով («Արշալույսի ձայներ», «Քրթուներ», «Քուղթի փառք», «Մութ
խավեր կամ բամբասանք», «Պետրոս Գուրջանի կյանքն ու գործը») բարձր են գնահատում Ա.
Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Գ. Չոհրապը, Հովհ. Հովհաննիսյանը:

1891 թվականին Ա. Չոպանյանը՝ Կեդրոնականի նոր շրջանավարտ, Արփիարյանի կողմից
հրավիրվում է աշխատակցելու նորաստեղծ «Հայրենիք»⁶ օրաթերթին՝ իբրև օգնական-խմբագիր:
«Հայրենիքի» շուրջն են համախմբվում ժամանակի արևմտահայ մտավորականության ականա-
վոր դեմքերը՝ Չոհրապը, Բաշալյանը, Արփիարյանը, Քլիպտինցին, Կամսարականը, Տեմիրճի-
պաշյանը և ուրիշներ: Չոպանյանին բախտ էր վիճակվել այդ նշանավոր մտավորականների ըն-
կերակցությամբ, նրանց բարեբախտ ազդեցությամբ կրթելու հրապարակախոս քննադատի իր
միտքն ու գեղագետի ճաշակը:

«Հայրենիք» օրաթերթը, բնույթով լինելով նաև գրական, հնարավորության սահմաններում
փորձում էր իր էջերում արտացոլել ժամանակի գրական կյանքը, ձայնակից լինել նոր սե-
րնդի գեղագիտական որոնումներին: Այս իմաստով իսկական հայտնություն էին Ա. Չո-
պանյանի՝ «Գեղարվեստի աշխարհեն», «Գրական աշխարհեն», «Քատերական քրտիկ», «Փա-
րիլայն քրտիկ», «Եվրոպական հրատարակություններ» խորագրերով հոդված-գրախոսություն-
ների շարքը⁷: Հոդվածներ, որոնք, սակայն, թեթևազավատությամբ են ընդունվում նույնիսկ թեր-
թի խմբագիր Արփիարյանի կողմից: Իսկ Բաշալյանի՝ 1893-ին Չոպանյանին հղած նամակ-
ներից մեկում կարդում ենք. «Բայց ըսեմ քեզի, որ «Հայրենիքի» կարոցողներեն հարյուրին
իննսունը շհասկնար քեզի, շվարած կմնա կոր: Ինք ո՛ւր է, և դուն զինքը ո՛ւր տանիլ կուզես
կոր: Գրականության ու գեղարվեստին ծայրագույն նրբությունները բացատրելու կելլես կոր
հասարակության մը, որ անոնց այր-բեմ-գիմը չգիտեր դեռ», և ապա. «Գալով ընդհանրապես
գրածներուդ, կուզե՞ս իմ կարծիքս... Ես հաճույքով, խիստ մեծ հաճույքով կկարդամ գրած-
ներդ և եթե զուտ գրական-գեղարվեստական հանդես մը ունենայի՞նք՝ միայն զարգացած մտ-
քերու համար, իրենց հաճմար շրջանակին մեջ կրլլային հոն» (ԱԳՆ—102, 103)⁸, (ընդգծում-
ները մերն են— Յու. Ա.): «Եթե զուտ գրական-գեղարվեստական հանդես մը ունենայի՞նք...»: Սա
անդիմադրելի ցանկությունն էր ամեն մի հայ երիտասարդի: Նաև՝ Արշակ Չոպանյանի:

³ Նոր կյանք, լոնդոն, 1898, № 11, էջ 26:

⁴ Մաղիկ, 1895, էջ 19:

⁵ Հ. Օշականը, 90-ականների արևմտահայ գրական սերունդը բաժանելով իրապաշտների
և արվեստագետների, 1895 թվականը ընդունում է իբրև սահմանագիծ, շեշտելով հատկապես
«Մաղիկի» դերը, իսկ Ա. Չոպանյանի մասին ասում է. «մեր արվեստագետ սերունդը իրմե կու-
գա բացառաբար» («Համապատկեր», հ. 5, հ. 6):

⁶ «Հայրենիքը» իբրև ազգային, քաղաքական և գրական օրաթերթ, հրատարակվել է
Պոլսում, 1891 թ. հունիսից, Ա. Արփիարյանի և Հովհ. Շահնազարի ջանքերով:

⁷ Սյու հոդվածների մի զգալի մասը Չոպանյանը գրել է Փարիզում, 1893—1894 թթ., ուր
մեկնել էր, ինչպես ինքն է ասում. «ազատ էրջաւտներ ընելու»:

⁸ ԱԳՆ—Արևմտահայ գրողների նամականի, Երևան, 1972:

Մեկ տարի անց արդեն Չոպանյանը ծրագրեր էր կազմում ստեղծելու մի հանդես, ուր ժամանակակից գրողները կարողանային ընդարձակ ուսումնասիրություններ հրատարակել և ավելի խնամքով մշակել «արվեստի գրականությունը», որ օրաթերթի մեջ իրականացվում էր ոչ լիարժեք կերպով⁹:

«Արվեստի գրականություն» համար «Հայրենիքը» իրոք հարմար չէր: Այն չէր կարող լրացնել գրական-գեղարվեստական հանդեսի պակասը: Եվ հետո՝ «Հայրենիքը» «այն ատեն միայն նշանակություն մը ստացած էր, երբ մեր երիտասարդության մտավոր ձգտումը ներկայացնելու հանգամանքը ուներ. այս նշանակությունը չէր կրցած պահել երկար ատեն»¹⁰: «Հայրենիք» չէր կրցած միևնույն գիծի վրա մնալ¹¹: 1894-ին արդեն խզվել էր «Հայրենիքի» խմբագրական կազմի դաշինքը, կուսակցական հակամետ հայացքների պատճառով Ջոհրապը, Կամսարականը, Կյուրճյանը գծովել էին Արփիարյանի հետ, հեռացել խմբագրությունների: Առանձնապես հիմնավոր չէին և Չոպանյանի ու Արփիարյանի հարաբերությունները: Բացի այդ, «Հայրենիքը» իր արմատական դեմոկրատական ուղղվածության համար ավելի հաճախ էր արժանանում գրաքննության «ուշադրությանը», Թուրքական կառավարությունը աննշան պատրվակ էր փնտրում Թերթի հրատարակությունը ընդմիջող դադարեցնելու համար: Այնպես որ, 1895-ին «Հայրենիքը» օրհասական վիճակում էր:

«Հայրենիքից» բացի, Պոլսում նորերից շարունակվում էին հրատարակվել «Արևելքը», «Ճեհրտի ե շարիգեն» (հայատառ Թուրքերեն օրաթերթ), «Բյուրակներ» և «Մաղիկը»:

«Արևելքը» հասարակական ընդգծված ուղեգիծ ունեցող օրաթերթ էր: Բացի այդ, 1890-ի փետրվարից պահպանողական վարչության ձեռքն անցնելով, շարունակում էր մնալ «պահպանողական ազնվաշուքներու օրկանը» և անմիտ փաստեր էր որոնում հայ գրականությունը ժամանակի եվրոպական գրական ուղղությունների ինքնահար «մոլորությունից» փրկելու համար: «Բյուրակներ» (1882—1908 թթ.), կրելով «հանդես գիտական, քաղաքական և ազգային» հնուն տիտղոսը, առանձնացել էր այսպես կոչված կրոն-գիտական ուսումնասիրությունների, բարոյա-քրիստոնեական հարցասիրությունների շրջանակներում:

90-ականներին Պոլսում շարունակվում էր լույս տեսնել նաև «Փունջը» (1860—1907 թթ.) քաղաքական, գրական, ազգային շարժաթերթ, որ գերազանցապես անհաղորդ էր ժամանակի գրական պահանջներին ու ոգուն և մեկն էր այն պարբերականներից, որոնք Արփիարյանի բնորոշմամբ, ձգտում էին հեռու մնալ գաղափարական մեծ թռիչքների փորձություններից: Եվ վերջապես՝ «Մասիսը», որ զուտ գրական բովանդակությամբ այնքան փառավոր հրատարակություն էր ունեցել 1892—93 թվականներին (Գ. Ջոհրապի և Հր. Ասատուրի խմբագրությամբ), 93-ին իր տեղը զիջում է կրթական-մանկավարժական «Մասիսին», և ապա 1894-ի աշնանը՝ դադարում հրատարակվելուց¹²:

Այսպիսով, պոլսահայ մամուլում գեղարվեստական լայն ընդգրկումներ ունեցող գրական ճշմարիտ հանդեսի անհրաժեշտությունը խիստ զգալի էր: Արշակ Չոպանյանի «Մաղիկը» եկավ լրացնելու այդ պակասը:

«Մաղիկը» հրատարակվել է 1886 թվականից¹³, իբրև ազգային, քաղաքական և գրական հանդես: Ունեցել է համեմատաբար երկար կյանք՝ 1886—1911 թթ.: Սակայն, կրելով արևմտահայ երերուն հասարակական-քաղաքական կյանքի խաթարող ազդեցությունները, բազմաթիվ անգամներ փակվել է, ապա նորից հրատարակվել, ամեն անգամ նոր շրջագրով և նոր բովանդակությամբ: Մինչև 1895 թվականը հանդեսն ունեցել է հրատարակության երեք շրջան, խմբագրվել ժամանակի կարող մտավորական ուժերի կողմից՝ Հ. Հաչյան, Ա. Սաքայան, Գ. Փալազաշյան, Ա. Սուրենյան: Երկրորդ շրջանը սկսվում է 1890-ի հունիսից: Նոր ծրագրով հրատարակվող շարաթաթերթի նպատակն էր նաև ծառայել ընթերցողների գեղարվեստական ճաշակի զարգացմանը, կրթել նրանց միտքը, ազնվացնել զգացումները¹⁴: Եվ... «Ճիշտ այդ նպատակի մասամբ իրագործման համար է,— գրում է Թերթը մի տարի անց,— որ սկիզբն է վեր հոգատար եղած եմք «Մաղիկի» թուղթին: գեղեցկության և տոկոնության, ինչպես և տպագրության մաքրություն»¹⁵:

«Մաղիկ» հանդեսի այդ շրջանի նյութերի գերակշիռ մասը հնախոսական-կրոնական, կր-

⁹ Անահիտ, 1901, № 2, էջ 37:

¹⁰ Մասիս, 1893, № 3976:

¹¹ Ա. Ալպոլյանյան, Անհետացող դեմքեր, Գր. Ջոհրապ, 1919, էջ 126:

¹² «Մասիսը» վերահրատարակվում է 1896-ի հունիսից, իբրև կրոնական շարաթաթերթ:

¹³ Հատ Ա. Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» (1794—1967), Երևան, 1970), «Մաղիկը» լույս է տեսել 1833-ից՝ որը սխալ է: Գ. Լևոնյանի և Հ. Պետրոսյանի մատենագիտական ցանկերում նշված է ճիշտը՝ 1886 թ.:

¹⁴ Մաղիկ, 1890, նոր շրջան, հունիսի 15, № 1:

¹⁵ Մաղիկ, 1891, Բ տարի, № 1:

թական դաստիարակչական հողվածներ են, եպիսկոպոսների ու դպիրների կենսագրականներ, սկրոնական հարցերու պատասխաններ», ազգային կյանքին վերաբերող ներքին ու արտաքին լուրեր:

Եկեղեցական, կրոնական հողվածների կողքին սակայն, պարբերականում տպագրվել են նաև բանասիրական և պատմագիտական գրվածքներ, գեղարվեստական գործեր: Ինչպես օրինակ՝ Վ. Սվաճյանի, Եվտերպեի, Լ. Մկրտչյանի բանաստեղծությունները, հատվածներ Զ. Պարոնյանի «Ազգային շրջերից» (1891, № 39, «Խաշատուր Միխայսյան»), «Շար հայ կենսագրություն» գրքից, («Փանաթեոցի Խաշատուր», 1892, № 41), Տեմիրճիպաշյանի գրախոսականը (Միհրան Լովհաննիսյան, «Իրական կյանքի նվազներ», 1893, № 19). Քարալյ Քովմասի ուսումնասիրությունները անգլիական գրականության մասին («Չոսեր», 1891, № 17, «Ջոն Միտոն», 1891, № 24, 30) և այլն:

Պետք է ենթադրել, որ «Մաղիկը» գուտ գրական բովանդակություն է ունեցել հրատարակության երրորդ շրջանում (1894-ի մայիսից), երբ նրան աշխատակցել են Մ. Լովհաննիսյանը, Զ. Նարյանը, Եվտերպեն, Գ. Խաչկյանը և ուրիշներ: Այն հարցին, թե նոր «Մաղիկ»... ի՞նչ ըլլալու սահմանված է, առավելագույն ի՞նչ բանի համար պիտի լինորվի», Մ. Լովհաննիսյանը խմբագրականներից մեկում պատասխանում է. «Մաղիկը» սահմանյալ է գրական հանդեսի մը բարձրության հասնելու...» (№ 5): Դժվար է ասել՝ «Մաղիկը» 1894-ին հասնել է այդ բարձրության, թե՛ ոչ: (Մեր ձեռքի տակ եղած թերթի մի քանի համարները՝ №№ 2, 4, № 38—39, աղքատիկ տեղեկություն են տալիս այդ մասին): Բայց ակնհայտ է, որ այդ հանդեսը հենց սկզբից էլ չէր կարողանում բավարար սնունդ տալ նոր սերնդի որոնող մտքին, նրա գեղագիտական հետաքրքրություններին:

«Մաղիկը» ճշմարիտ «Գրական հանդեսի մը բարձրության հասավ միայն 1895-ին՝ Ա. Չոպանյանի խմբագրությամբ: Արշակ Զոպանյանի կողմից «Մաղիկը», իրև ազգային, գրական և քաղաքական կիսամյա, խմբագրվել է 1895 թվականի մարտից մինչև հոկտեմբեր¹⁵. անհամեմատ կարճ մի ժամանակաընթաց իր գոյության տասնամյակը բոլորող հանդեսի համար: Սակայն «Մաղիկը» առավել լուրջ գրական-գրականագիտական դեր խաղաց հենց այդ մի քանի ամիսների հրատարակությամբ:

Մավառով ոչ մեծ, ընդամենը 32—40 էջից բաղկացած հանդեսը հենց սկզբից էլ ունեցավ համակիրների մի ստվար խումբ: Արհավիրքի այդ օրերին, երբ Պոլսի պարբերականների մեծ մասը յուրաքանչյուր հրատարակություն հազիվ էր ապահովում մի քանի հարյուր բաժանորդներով, Մաղիկի 1500 բաժանորդ ունենալն արդեն իսկ վկայում է նրա հասարակական մեծ ընդունելության մասին: Լանդեսի հրատարակումից ընդամենը մեկ ամիս անց՝ Արտ. Հարությունյանը Մալխարայից գրում է. «Մաղիկ» հուսալիցաբան ավելի համակրություն շահի սկսած է հոս, ինչ որ հազվագույն պարագա մըն է լրագրության որևէ ճյուղին պատկանող հրատարակության մը համար:

«Արևելք» իր հիմնադրութենեն ի վեր երկու բաժանորդն ավելի ունեցած չէ, «Հայրենիք» 4 բաժանորդներ միայն ունի, մինչդեռ «Մաղիկ» այսօր կունենա անոնցմե 6 հատ, թիվ մը. որ բազմապատկվելու տրամագրություններ ցույց կուտա...» (ԱԳՆ—199):

Լանդեսի աշխատակիցներն են եվրոպական քաղաքներում ուսանող հայ երիտասարդությունը և Արևմտյան Հայաստանի գավառների (Խարբերթ, Սասուն, Վան) ստեղծագործող մտավորականությունը: Աշխատակիցների այսպիսի ընտրությունն արդեն իսկ որոշակի գաղափար է տալիս հանդեսի ծրագրային խնդիրների մասին. «Երկու բառ պիտի բավի բացատրելու համար այս հրատարակության նպատակը,— գրում է Չոպանյանը «Մաղիկի» ուղեգրի՝ հողվածում,— «Մաղիկի» խմբագրությունը խորապես համոզված է թե ցեղի մը դաստիարակությունը իր գրականության միայն կկատարվի, պայմանով որ այդ գրականությունը մտածման ու գեղեցիկին սնուցանող ու մեծցնող տարրերն ունենա: Պիտի շանա, իր աշխատակիցներուն տաղանդավոր գործակցության շնորհիվ, գառգազման ճամփան քեղարևակի մեր արդի գրականությանը, գոր «Հայրենիք» քանի մը տարիս ի վեր ծաղկեցուց և սիրցուց ժողովուրդին: «Մաղիկը» ճշմարիտ հանդեսի մը հանգամանքը պիտի ունենա... Անկա սահմանված է մտնավանդ ընդարձակ և աշխատված գրականության»¹⁷ (ընդգծումը մերն է— Յու. Ա.):

Սա, իհարկե, բոլորովին էլ նախորդ շրջանի գրական հայեցողության սոսկական կրկնությունը չէ, այլ հետևողականորեն մշակված մի ձրագիր, որտեղ «արդի գրականություն» գաղափար ման համար իմաստ ու կշիռ է ստանում սեևոուն մի գաղափար. նոր ու ինքնատիպ ձևի միջ

¹⁵ Որոշ հեղինակներ (Ե. Արմեն, Կ. Սասունի, Զ. Հապեղյան) սխալմամբ Ա. Չոպանյանի «Մաղիկի» հրատարակության թվականը համարել են 1894 թ.:

¹⁷ Մաղիկ, 1895, № 1, էջ 1 (այսուհետև հանդեսի տարեթիվը, համարը և էջը կնշվեն տեքստում):

շարունակել «Արևելքի», «Մասիսի», «Հայրենիքի» սկսած գրական շարժումը, սպասարկու լինել հատկապես «արվեստի գրականության», «բարձր գրականության»:

Հենց այդպես էլ «Մաղիկը» ընդունվեց ժամանակակիցների կողմից: Երիտասարդ բանաստեղծ, գրագետ Արտ. Հարությունյանը, հիացմունքով ողջունելով հանդեսի հրատարակումը, այնտեղ տեսնում էր իր սերնդակից գրողների ստեղծագործական որոնումների ճշմարիտ արձագանքը. «փայփայած երազներն մեկն էր օր մը զՁեզ առանձին պարբերական թերթի մի գլուխ տեսնել,— գրում էր նա Չոպանյանին,— Այդ երազին իրականացումը այսօր զիս մանկունակ ուրախությամբ մը կհամակե, ու անբացատրելի հրճվանքով մը կլիցցիլ հոգիս՝ բարձր գրականության պատկանող հրատարակություն մը ունենալու կատարյալ գիտակցության մեջ»:

«Ըս պիտի առաջարկեն Ձեզի մասնավորապես մտավորական արմատական բարեփոխումի մը հետամտիլ, մտքի ծայրահեղ հատաշղթմականություն մը ցուցնելով մեր հասարակության մեջ, մասնավորապես շանք ունենալով նպատակահարմար ձևով մը խմբել նոր սերունդին, մե՛ր օճախին, հոգևորական ճակատությանը» (ԱԿՆ—196, 198):

«Մաղիկ» հանդեսի համար առանձնացվում են հետևյալ ծրագրային խնդիրները.

1. Առանց անտարբեր մնալու առօրյա հարցերի նկատմամբ, մեծ տեղ հատկացնել մեր գրականության, «լեզվին ու բարձրուն մըր ուսումնասիրությանց»: Բանաստեղծություններ, թատերգություններ, վեպեր, վիպակներ, հեքիաթներ, նորավեպեր, «բամաձի ամեն տեսակ գրվածներ» տպագրել մասնավորապես սկսնակ հեղինակներին: Առիթ տալ, կարելության շարժում, արևմտահայոց մեջ, հատկապես Հայաստանի գավառներում հանդես եկող գրական նոր ուժերի «երևմանն ու ծանոթացմանը», խրախուսել ու մղել նրանց հայ ժողովրդական բանահյուսության նորահայտ արժեքների հիմքի վրա ազգային գրականության զարգացմանը:

2. Ընթերցողներին հաղորդակից դարձնել եվրոպական գրականության, գիտության ու գեղարվեստի «գլխավոր շարժումներուն», ուսումնասիրություններով, հաղորդում-գրախոսություններով ճանաչել տալ նրանց «ին ու նոր աշխարհներու մեծ մտքերը, որոնք մարդկությունը շինած են» (1895, № 1):

90-ականներին գրչային հրատարակությունները պոլսահայ կյանքում բացառիկ երևույթ էին: «Գիրքը Պոլսո մտավորական հրապարակեն հետզհետե նահանջելով, հիմակ գրեթե աներևույթ մըն է,— գրում է Ա. Արփիարյանը,— գրողները իրենց ապաստարանը օրաթերթին և պարբերականին մեջ փնտրեցին. ... Կասն զի թուրք կառավարության պաշտոնյաները կարող չեն շարժագանցորեն ուշադիր ըլլալ հրատարակությանց, որոնք որոշյալ օրեր և ժամեր պետք է որ կանոնավորապես երկին»¹⁸:

Արևմտահայ գրականության զարգացման գործում 90-ականների հայերեն թերթերի ու հանդեսների դերը ճիշտ գնահատելու համար անպայմանորեն պետք է հաշվի առնել մի շատ կարևոր հանգամանք, որքանով էլ տվյալ պարբերականը, մասնավորապես գրական հանդեսը, կարողացել փոխարինել գրքին, որ «միակ անկորուստ վավերականությունն է գրականության մը կենդանության ու բարգավաճման» (ԱԿՆ, 23):

«Մաղիկի» վերը շարադրված խնդիրներից դժվար չէ նկատել, որ հենց այդպիսի նպատակ ուներ և Չոպանյանը: Հանդեսի ծրագրային հայտարարության Գրականության և արվեստի թանգարանում պահվող ձեռագիր օրինակում կարդում ենք. «Այսպիսի ատեն մը, ուր լրագրություն ամեն ինչ է, լավ և բնական է որ մարդ ուզե սահմանափակ շրջանի մը մեջ շատ բան սղմեցնել, այս հանդեսը պիտի ըլլա հանդես մը, համայնագիտարան մը, գրագրան մը... ուր պիտի գան խոսիս, վիճիս, երգեն, խորհրդածեն բոլոր հայ մտքերն ու սրտերը, հին, նոր, երիտասարդ, բանաստեղծ, գիտուն, բանասեր, արվեստագետ, վիպասան»¹⁹:

Հանդեսի ծրագրային միտումները իսկական խիզախում են օրերի համար: Սակայն պարբերական և ոչ մի հրատարակության մասին շարժում է դատել սոսկ ըստ նրա հրապարակած ծրագրի: Թերևս հենց այս հանգամանքը նկատի ունեն «Հայրենիքը», երբ գրում էր. «Արշակ Չոպանյան նոր օճախ մը կհիմնե: Հանդեսի ծրագիրը «նորությունն» է, ու մենք շատ կարոտ ունինք նորության, նոր ուղղության հետ սպասենք նաև որ «Մաղիկ» նոր գրողներ, կամ ինչպես ուրիշ առիթով ըսինք նորագույններու խումբ մը պատրաստե մեր գրականության համար»²⁰:

Արշակ Չոպանյանի «Մաղիկը» իրոք «նորագույններու խումբ մը» պատրաստեց մեր գրականության մեջ (Ռ. Զարդարյան, Վ. Խեքեյան, Զ. Ծսայան, Զ. Մրմրյան): Նորերից հանդեսին աշխատակցում են նաև Թլկատիցի, Ռ. Որբերյանը, Տ. Զրաքյանը (Ինտրա), Մելքոն Կյուրճյանը (Հրանդ), Միք. Շամտանճյանը, Կ. Տողրամանյանը և ուրիշներ: «Մաղիկի» 17 տետրերն ու երկու հավելվածական համարները դառնում են սկսնակ գրողների երկերի գիրք-ժողովածու:

¹⁸ Ա. Արփիարյան, Պատմություն ժԹ դարու Թուրքիո հայոց գրականության, Կահիրե, 1944, էջ 74:

¹⁹ ԳԱԹ, ԱԶՅ, № 633:

²⁰ Հայրենիք, 1985, № 1100:

Գրականագետ Ծ. Պետրոսյանի կարծիքով Չոպանյանը «Մաղիկում» «գրական ճանապարհ է բացել նաև Օ. Զիֆթի Սարաֆի համար»²¹։ Ա. Չոպանյանը դարասկզբին չէ, որ հիմնադրել է «Մաղիկ» հանդեսը, այլ խմբագրել է այն 1895 թվականին միայն։ Եվ, բնականաբար, չէր կարող «Մաղիկում», «ճամփա բացել» Օ. Զիֆթի Սարաֆի համար, որի գրական փորձերը մուլում սկսել են հրատարակվել 1900-ական թվականներից։ («Մաղիկը» Պոլսում դարասկզբին խմբագրվել է Ա. Անտոնյանի, Միք. Շամտանճյանի կողմից, իսկ Չոպանյանը 1895-ից Փարիզում էր)։

Ա. Չոպանյանի «Մաղիկում» գրական իր առաջին քայլերն է կատարում Ջապել Եսայանը։ Հանդեսի անդրանիկ համարում տպագրվում է նրա «Երգ առ գիշեր» արձակ բանաստեղծությունը, ապա նաև՝ «Կույրը», «Զխարող սերը» հոգեբանական պատկերները։ «Երգ առ գիշեր»-ը երիտասարդ բանաստեղծուհու տպագիր առաջին ստեղծագործությունն էր։

Վ. Քեֆեյանը, իր իսկ խոստովանությամբ, ստեղծագործական «Ճշմարիտ տեսլույն» կատարում է «Մաղիկում»։ Նրա «Սովազբբին վրա», «Ջուրակը» արձակ բանաստեղծությունները արտահայտում են անկեղծ ապրում, հեղինակի ստեղծագործությանը բնորոշ «անզարդ ու զուսպ վեհություն»²²։ Ահա մի հատված «Ջուրակը» բանաստեղծությունից։

Տարիներ, տարիներ անցան։
Ջութակը հոն նետեցի ուրկից գտած էի,
թելերեն բարձր առյուծի կաթիլներ վազելով։
Կոցեցի խուցիս դուր ու փակվեցա հոն,
բանի մը շապանով, բանի մը շիբեյով սպասել,
որովհետև այն, զոր հուսացած էի, որուն տեղացած էի
նոգիս ամբողջ ուժովը եկած էր ու անցած,
ծանր հիվանդության մը պես, որ մարմնին անզամները կրուլացնե ու ձայնը կտրացնե կակորդին մեջ» (Մաղիկ, 1895, էջ 495)։

Այսպես, հոգու ամբողջ ուժով տենչացած երազները փշրվում էին, ծնվում էր անավոր թախծի, որ շատ հաճախ իր ճեղք բերում էր հուսալքում, հրասթափություն։ Եվ հուսալքման այդ օրերին, երբ պոեզիան դարձել էր անարվեստ ու անարդյուն, երբ «գրականություն մտնող ամեն ոք պարտավորություն կզգար, կարծես կյանքի վրա ողբերով սկսելու», երբ ամեն սկսնակ գրականություն էր մտնում «գեղեզմանի մը մեջ նետվելու բաղձանքներով», անկեղծ թախծի այսպիսի ճշմարիտ էջերը հուսահատ լալկանությունից առանձնացնելու համար խմբագրից քիչ չանքեր չէին պահանջում։ Չոպանյանը խմբագիր էր՝ օժտված գեղարվեստական ստեղծագործության մեջ գեղեցիկը, ճշմարտը տեսնելու զարմանալի նուրբ զգացողությամբ։

Այդ զգացողությունն էր, որ օգնեց նրան «Մաղիկի» խմբագրատուն ուղարկված գավառական բազմաթիվ թղթակցություններից առանձնացնելու խորհրդիցի Խ. Զարդարյանի գեղարվեստական համալի պատկերները («Ջարնված որսորդը», «Սովակին հարսը», «Մաղիկներ, կարմիր ծաղիկներ», «Հեքիաթ»), խորհրդի ժողովրդական ավանդությունների հին ու հարգատու գույներով, բնության խորհրդավոր գեղեցկություններով լեցուն պատկերներ, որոնք «Մաղիկի» խմբագրատնից մատնացույց էր անում իր աշխատակիցներին իրրե գավառաշխարհի բառ ու բանով համեմատված արձակի լավագույն օրինակներ։

Խ. Զարդարյանի գաղափարական-ստեղծագործական իդեալի բովանդակությունը մարդկային ու գեղեցիկի որոնումն է, մարդուն վեհ ու անաղարտ տեսնելու ձգտումը, բնության ու մարդու փոխհարաբերության խորհուրդը։ Լեռների հպարտ որսորդ զոհ է գնում բնությանը, որովհետև փորձում է աղարտել լեռնաշխարհի գեղեցիկ պատկերը («Ջարնված որսորդը»)։ Կյանքից ու տառապանքից հոգնած մարդը անդորր է որոնում բնության մեջ, իսկ ամենհինգ անդունդը մոլորեցնում-կործանում է նրան։ Մարդը հյուսվում է հայրենի լեռների մշուշոտ բարձունքներին, դառնում բնության մի մասնիկը, անդունդի եզերքին բուսած ալվարդ ծաղիկ («Մաղիկներ, կարմիր ծաղիկներ»)։ Սովակի մանկամարդ գեղեցկուհին ամեն գիշեր, «կես գիշերին ուլ առնե», ծովակի ափին հանդիպում է սիրած պատանու հետ։ Սովահարսը տուն էր դառնում արուսայակի ծագելուն պես։ «Անտվանց լուսուն դեմ երբ ծովուն հարսը քայլերը կը դարցնե ու տուն կը դառնա, ալիքները ափերուն կը զարնեն ու ձուկերուն մեջ տարօրինակ հուզում մը կիչնա»։ Գյուղի շար պատավի մատնությամբ սակայն ծովահարսի ամուսինը վրեժ է լուծում սիրահարներին։ Իրկինամուտին, երբ «լեռը պակուղ հովիվը», «գյուղ դարձավ՝ ո՛չ գյուղ գտավ, ո՛չ մարդ. ջուրը կլլած էր ամենքն ալ» («Սովակին հարսը»)։ Բանահյուսական նյութի գրական մշակման ու օգտագործման ուղղությամբ Խ. Զարդարյանը հասնում է գաղափարական ու գեղարվեստական մեծ խտացման՝ ըստ էության ոչինչ չավելացնելով ժողովրդական բուն ավանդությունը, բայց և շեշտելով նրա տոհմիկ-ժողովրդական նկարագիրը, բառի, գույնի, արտահայտության եղանակի քնարերգական մաքրությունը։ Նրա գեղարվեստական պատկերներին ու հեքիաթներին բնորոշ է դրամատիզմը, հոգեբանական ներքին խոր կերպավորումը։

Ուշագրավ է, որ հանդեսի նույն համարում «Սովակին հարսը» հեքիաթի հետ Չոպանյանը տպագրեց նաև Ա. Միցկևիչի «Վիլի» բալլադի թարգմանությունը, որի նյութը՝ հյուսիսա-

²¹ Ծ. Պետրոսյան, Գրական դեմքեր, 1977, Երևան, էջ 322։

²² Վ. Քեֆեյան, Իռեւման խորհուրդներ, 1978, Ե., էջ 4։

յին մի ավանդություն, Չոպանյանի բացատրությամբ «տեսակ մը նմանություն» ունեւր «մեր հեքիաթին հետ»: «Սաղիկի խմբագիրը հիշեցնում էր, որ Գլոթիկ ամենակատարյալ բալլադներէց մեկը նույն ավանդության գեղարվեստական շափածո մշակումն է: Ընթերցողներին հանձնարարովում էր համեմատել այդ ստեղծագործությունները՝ նկատի ունենալով դրանց ոչ միայն թեմատիկ-սյուժետային ընդհանրությունը, այլև գեղարվեստական առանձնահատկությունները:

«Սաղիկի» էջերում «Սովակին հարսը» հեքիաթի մասին Չոպանյանը գրում է. «Այս երկրորդ հեքիաթն է, զոր խարրերգի երիտասարդ գրագետը, Ռուբեն Զարդարյան, մեզի կրկն, իր շղուտ արձակի մեջ սեւեռելով մեր գավառական սիրուն ավանդությունները Փափաքելի էր որ Զարդարյան հետեղնէր ունենար, ու անմիտ ճոռոմություններու տեղ, գավառացի գրողները տեղական ավանդություններ կամ ժողովրդական երգեր մեզի ղրկեին...»:

Տարիներ հետո Ի. Զարդարյանը երախտագիտությամբ էր հիշում Ա. Չոպանյանին. «...Շատ բան պարտական եմ Ձեզի,— գրում էր նա,— առաջին քաջալերությունը Ձեզմե լսած եմ իմ գրական սկզբնավորության մեջ և Ձեր գնահատումը բարերար եղած է ինձի...» (ԱԳՆ—235—236):

Գավառում ստեղծագործող հեղինակներից «Սաղիկը» տպագրում է նաև Մ. Մարտիրոսյանի, Ա. էոքսուլցյանի, Ղ. Փշիկյանի և այլոց գեղարվեստական գործերը, հողվածներն ու բարբի պատկերները, ընդարձակ բանավեճ բացում ժողովրդական ավանդույթների շուրջ «Հարալեզ և մարդագոհ» թեմայով Գ. Խաչկյանի, Հ. Նարյանի, Ե. Գուրյանի մասնակցությամբ: Այս բոլորի նպատակը մեկն է. հայտնարեիլ հայկական գավառներում՝ բուն Արևմտյան Հայաստանում ապրող ժողովրդի հոգևոր գանձերը: «Մենք այդ հորդանքով կխորհենք նույնիսկ մեր գրականության բարձրացմանն ու ճոխացմանը,— բացատրում է Չոպանյանը,— որովհետև համոզված ենք որ տոհմային գրականություն մը ունենալու համար պետք է որ ճանչընանք ցեղին հոգին, որ ցրված է գավառներուն մեջ: Մեր ձգտումը՝ գավառի կյանքը ճանչնալու բարձրացնում է մեզի համար» (նույն տեղում, էջ 580), (ընդգծումը մերն է—Յու. Ա.):

Իր «Ուսումնասիրության մը շուրջը» հողվածում, շհամաձայնելով Արփիարյանի այն կարծիքին, թե մեր տոհմային բանաստեղծությունները բոլորն էլ «արտում, տխուր, շատ անգամ գրեթե միօրինակ» են, Չոպանյանը գրանք համարում է ճշմարիտ բանաստեղծություն, «լուսավոր ու խանդավառ քնարերգություն մը», «ուժեղ ստեղծման», արվեստագետ զգայնության արտահայտություն (նույն տեղում):

Մեր հնագույն բանաստեղծության, ինչպես ինքն էր սիրում ասել, տոհմային բանաստեղծության կրակոտ ոգու լույսով, արևով խանդավառված բանասեր-գրականագետի այդ անզուգական հիացքն էր, որ նրան բերեց մեր բանաստեղծական քերթության նախահոր՝ Գրիգոր Նարեկացու պոեզիայի նախադուրը, «Այո, արև կա Նարեկին ալ մեջ՝ Գոհար վարդն վառ առեալի վհհից վարսից արփենից... Կարդա՛ք Նարեկացին» (նույն տեղում, էջ 264):

«Սաղիկի» համար ծրագրային նշանակություն է ստանում Չոպանյանի «Գրիգոր Նարեկացի» ծավալուն ուսումնասիրությունը (նույն տեղում, էջ 129—135, էջ 170—189), քանի որ աշխատության մեջ հեղինակի ամենասիրելի գաղափարը, թե՛ «Նարեկացին իր ցեղին հոգիին ամենեն մեծ ներկայացուցիչն է, և թե այդ ցեղը քնարերգության ու արվեստագետ զգայնության ցեղ մըն է», նվիրական գաղափար է «Սաղիկ» հանդեսի համար ընդհանրապես:

«Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությամբ «աղոթքի մատյան», «հայ աղոթքի նվիրական գիրք» ճանաչված Նարեկացու ժառանգությունը առաջին անգամ գնահատվեց իրրև քերթություն, իրրև «արյունոտ բանաստեղծության հրավառ հեղուկ»-ով ապրող երգ:

«Հանենք զանիկա աղոթք գրողի կրոնական գույնն, ուր սահմանափակված էր և դենք զանիկա իր տեղը, գրական մեծ հանճարներուն օղակարկառ բարձունքին մեջ: Ա՛լ չըսենք որ մեր բանաստեղծությունը հսկա շունի: Մեր մեծ մարդն է Ան»:

Ըստ Չոպանյանի, այդ բարձունքը Հոմերոսի, Շեքսպիրի, Գանթի, Վերհարնի կողքին է:

Դրա հավաստումը միատիպական գրականությանը²³ նվիրված «Սաղիկի» գատկական հավելվածն է նաև, ուր, «Նարեկից» և Տաղերից հատվածներ տպագրելով աշխարհաբար թարգմանությամբ («Աղոթք առ աստվածածին», «Կյանքի նավարկությունը», «Վերջին դատաստանին...», Բան ժը և «Տաղ հարություն» բանաստեղծությունից փոքրիկ մի կտոր) հանդեսի խմբագիրը իր ընթերցողներին առաջարկում է սրանք համեմատության մեջ դնել նույն համարում

²³ «Միատիպականությունը,— Չոպանյանի բացատրությամբ,— պետք է փոխվի ու ըլլա մեր մեջ ձգտումը դեպի լավագույնը: Ապաշխարհանքին պետք է հաջորդեց աշխատությունը, հուսահատ ողբերուն տեղ՝ հավատքը ապագային վրա, մարդկություն անկման շլատող գաղափարին տեղ՝ համոզումը մարդկային մաքին դեպի տեսլականը բարձրացման, և պակուցիչ Աստծո մը հղացումին տեղ՝ հղացումն անհուն բարության ու գեղեցկության սկզբունքի մը որ տեղեկերի հոգին է» (Սաղիկ, 1895, էջ 111):

տեղ գտած Դանթեի, Վեպեի, Սրբուհի Թերեզայի և այլոց ստեղծագործությունների հետ: Այս երևույթի խորքում մկրտությունն է ստանում Չոպանյանի գաղափարական նոր խիզախումը, որը հետո, նրա խմբագրական ողջ գործունեության համար այնքան բնորոշ պետք է դառնար: Այն է. հայ մարդուն ճանաչել տալ իր ցեղին ալ ամենն մեծ բանաստեղծը», իր ֆեաբրգաի հոգու իրական արժեքները:

Խմբագիր Չոպանյանը չի մոռանում և մոտ անցյալի հայ գրականության ու արվեստի «մեծ մարդերուն»: «Մաղիկի» նպատակային երկու համարները նվիրվում են Հակոբ Պարոնյանին և Պետրոս Աղամյանին՝ իր իսկ գրական ուսումնասիրություններով:

Ա. Չոպանյանը, ինչպես տեսնում ենք, խմբագիր լինելուց գատ նաև իր հանդեսի ամենարեղուն աշխատակիցն է: Նրա «Հյուսիսի գրականությունները», «Էտմոն և Ժյուլ տը Կոնքոտ», «Միստիքական գրականությունը մեր մեջ» գրականագիտական բնույթի աշխատանքները, արձակի ինքնատիպ էջերից «Ծա ի՞նչ ընեմ հոգիով», «Լացող աղչիկը», «Ապաստանը», «Դեպի անցյալը» նորավեպերը, «Գրքեր» խորագրով կարճաոտ, բայց ճշգրիտ բնորոշումներով գրախոսականները, կրթական ու ազգային կյանքին վերաբերող խմբագրականները կազմում են «Մաղիկի» այն միջուկը, որի շուրջը ծաղկաթերթի պես համախմբվում էին ժամանակի երիտասարդ գրական դեմքերը:

Հայ գրականության զարգացման հեռանկարների տեսանկյունից հանդեսը առաջնային խնդիր էր համարում եվրոպական և համաշխարհային գրականության փորձի քննադատական յուրացումը: Այսպես, արևմտահայ գրականության վրա, ըստ հանդեսի, իշխող ազդեցություն է ունեցել ֆրանսիական գրականությունը: Այդ ազդեցությունը, սակայն, եղել է միակողմանի: Յուրացնելով ֆրանսիական գրականության միայն «պակասավոր և դյուրին կողմերը» մեր գրականությունը իրասուրեն կորցրել է իր բնիկ ինքնուրույն ամենից քիչ են ծանոթ «Ֆրանսիական գրականության բուն իսկատիպ դեմքերը» — Ռարբին, Ռոնսարը, Ռուսսոն, Դիդրոն, Վինեն և ուրիշներ: Քիչ է ուսումնասիրված «այն ստեղծագործ հսկան որ Պալզաբն է», «գրքն ոչ ոք խորհած է հետևել ֆրանսական գրականության ամենն կատարյալ դեմքին, Ֆլուպերին, այն միակ ֆրանսացի գրագետին որ էսքիլնբրու, Շեքսպիրնբրու, Կոթենբրու մեծ հուլլին, իմաստասեր-արվեստագետ-գրագետներու բարձրագույն հուլլին մեջ կրնա մտնիլ» (նույն տեղում, էջ 234—235):

Չոպանյանը պաշտպանում է ֆրանսիացի երիտասարդ գրողների այն կարծիքը, որ ֆրանսիական գրականությունը, առանձին բացառություններով (Ֆլուբեր և ուրիշներ) չի ունեցել հելլեն բանաստեղծության և հյուսիսի ժողովուրդների գրականության «մտածման ու արվեստի մեծ ներդաշնակությունը»: Այս իմաստով Չոպանյանը անհրաժեշտ է համարում ընդլայնել ծանոթությունը անգլո-գերմանական և ռուս գրականությունների նկատմամբ: Նա ավելի մեծ ընդհանրություններ էր տեսնում հայ գրականության և հյուսիսի գրականությունների միջև: Չոպանյանի կարծիքով՝ քանի որ «մեր ցեղը գերազանցապես բանաստեղծ ցեղ մըն է, լուրջ ու խորունկ իր զգացման մեջ, հուզման, ներշնչման, քնարերգության ցեղ», ուստի մեր ողուն ավելի մտերիմ, «ավելի մոտիկ ոգի մը անգլո-գերմանական գրականությանց մեջ պիտի գտնենք» և, հետևաբար, «պիտի շանանք միշտ ընդարձակ տեղ մը նվիրել այս հանդեսի մեջ հյուսիսային ու մասնավորապես Անգլո-Գերման մտքին, գործերու ուսումնասիրությանց» (նույն տեղում, էջ 237—238): Արմեն Գնունու («Պայրն և Վեննայի հայոց վանքը»), Մ. Շամտանճյանի («Կենհարդ Հաուրդման», «Իրապաշտության հոգեբանությունը»), Ստ. Քարաթյանի («Հյուսիսային գրականությունը») հոդված-ուսումնասիրությունները, թեև երբեմն ոչ այնքան մեծարժեք, իրենց բնորոշումներում վիճելի, բայց բնդհանուր առմամբ որոշակի գեր ունենին անգլո-գերմանական և ռուս ժողովուրդների գրականությունների հետ հայ ընթերցողի ծանոթությունը խորացնելու գործում:

Իրատրալից, Գյումայից, Անդերսենից, Գյոթեից, Վեպեից, Միցկևիչից «Մաղիկում» տպագրված թարգմանությունները, ապա «Գրական աշխարհն», «Գեղարվեստի էջեր» բաժնի հոդվածներն ու գրախոսականները, «Սիրո երգեր» բանաստեղծությունների շարքը արևմտահայ գրականություն էին բերում եվրոպական առաջավոր գրական շարժման շունչն ու թարմությունը: Ըստ էության, այս նյութերով «Մաղիկը» ձգտում էր նաև ընդլայնել հայ մտքի գեղեցկագիտական հետաքրքրությունների շրջանակը, լրացնել «գեղեցիկին զգացման պակասը», որ Չոպանյանի կարծիքով այնքան զգալի էր մեր բարբերում, մեր հանրային և անձնական կյանքում²⁴: Ըստ այսմ առանձնահատուկ իմաստ են ստանում հանդեսի բոլոր համարներին բնաբան ընտրված Գյոթեի նշանավոր խոսքերը՝ «Լեցուցեք ձեր միտքն ու սիրտը որչափ ալ լայն ըլլան», և ...Չոպանյանի բացատրությունը. «Կուզեի մեր դպրոցներուն ճակատը արձանագրել Գյոթեի ոսկի խոսքը զոր բնաբան ըրի այս Հանդեսին, «Լեցուցեք ձեր միտքն ու սիրտը, որչափ ալ լայն ըլլան»: «Ու եթե լայն չեն, պետք է ավելցնել, լայնցուցեք նախ զանոնք» (նույն տեղում, էջ 204):

²⁴ Հայրենիք, 1892. № 332:

Կ. Պոլսի և հատկապես զավառների հայկական դպրոցներում տիրում էր հուսահատեցնող և անմխիթար մի վիճակ: Ամեն դպրոց իր առանձին ծրագիրն ունէր, շկար ուսուցման միասնական կարգ, զգացվում էր ուշիմ և գրագետ ուսուցիչների պակասը: Աշակերտները՝ այդ զվանդակված պզտիկները», դպրոցից դուրս էին գալիս հիմնականում կիսագրագետ: «Մեր դպրոցներում մեջ,— գրում էր Չոպանյանը,— կյանքը շինված է այնպես որ մարմնին, հոգիին և մտքին առողջությունը տկարանա փտտի: Անհուն, ծանր, ճնշող ձանձուրվածք մըն է որ կիսմորե կյանքը անոնց մեջ» (նույն տեղում, էջ 341):

Կրթական այդ կյանքը «բնական ընթացքի մը» բերելու անկեղծ մտահոգութեամբ լի են «Մաղիկի» «Դպրոցական քրոնիկ» խորագրով հոդվածների շարքը:

Չոպանյանի «Մաղիկ» հանդեսը, կարճատև գոյություն պատճառով, շկարողացավ լրիվ իրագործել իր ծրագրային խնդիրները: 1895 թվականի աշնան արյունալի դեպքերը անկատար թողեցին դրանք: Մինչ այդ էլ գրաքննական վարչությունն էր արգելք լինում այսպես կոչված «կասկածելի» նյութերի, այդ թվում և գեղարվեստական շատ գեղեցիկ էջերի հրատարակման²⁵: Չոպանյանը, հավանաբար հաճախ է ստիպված եղել պայքարի մեջ մտնել թուրք գրաքննիչներին հետ՝ այս կամ այն հեղինակի աշխատասիրությունը տպագրելու համար: Այդ մասին է վկայում և նրա «Իմ կյանքի վեպը» ինքնակենսագրականից հետևելու դրվագը. «1894—95-ի շրջանին գացեր էի համառելու Պառնասյան էֆենտին, որ թույլատրեր իմ «Մաղիկի» մեջ ամբողջական հրատարակումը Տիրան Չրաքյանի մեկ գեղեցիկ արձակ գրվածքին, ուր մզկիթի մը նկարագրությունը կար»:

Պառնասյան էֆենդին կտրականապես մերժում է խմբագրի այդ խնդրանքը, պատասխանելով, որ դա անկարելի է, անհնարին: «Եվ որովհետև կհամարեի զինքը համոզելու ճիգիս մեջ,— շարունակում է Չոպանյանը,— քովը ծալապատիկ նստած բորիկ աղտոտ ոտքերով թուրք պաշտոնատարը դարձավ ինձի և թուրքերեն լեզվով պոռաց՝ «է՛, երկայն կընես կոր, սուս եղիր ու կորսվի սըտեղեն»: Իսկույն զգացի թե ինչ տեսակ երկրի մեջ կգտնվի և առի քալեցի»²⁶:

1895 թվականի զանգվածային կոտորածները վերջնականապես խարխուլում են արևմտահայ հոգևոր կյանքի հիմքերը, անհնարին դարձնում որևէ ազգագուտ գործունեություն Պոլսում: Հայ մտավորականների մի ստվար խումբ ստիպված էր տարագիր լինել երկրից:

«Ջարդերը զիս ցնցեցին,— գրում է Չոպանյանը,— իմ մեկուսացած գաղափարականի հանդարտություն ամոթալից ու հանցապարտ ցույց տվին ինձի, կյանքիս ամենեն խորին կերպարանափոխություններն մեկը կրեցի: Որոշեցի, իսկույն, ընել ինչ որ իմ կարողություններս կնեռեին «ուղղակի» ճառագույնում մը մատուցանելու համար իմ գծրախտ ազգիս զոր կխողոտեցին, առանց մեկնել խորհուրդ հարցնելու, առանց մեկնել պատվեր ընդունելու, գործի սկսա, ուղեցի շարունակել գործը, որոշեցի թողուլ Պոլսը, որուն ոճիրի, վայրենության, ցածություն միջոցաբար ալ կուժգացներ զիս և հոն ապրիլը անհնարին կգարձնեի զիս: Ես իմ կամքով ուղեցի Պոլսն ևլլել, որովհետև կտեսնեի, որ այլևս հոն մնալ ու լեզվին ու գրականության զարգացումովս ղրաղիլը անիմաստ, գրեթե անազնիվ բան մը պիտի ըլլար՝ երբ ազգս տանջարանի վրա կը քաշկոտնի: Ես իմ ձեռքովս դարբեցուցի «Մաղիկի» հրատարակումը, և որոշեցի մեկնել Բարիզ՝ ուր կզգայի որ բան մը կհրայի ընել, որչափ ալ մանրադիտական ըլլար ընել կրցած՝ ազգային պահանջներուն քով»²⁷:

Այսպիսով՝ Չոպանյանը 1895-ի հոկտեմբերին, գաղարեցնելով «Մաղիկի» հրատարակումը, մեկ ամիս անց հեռանում է Պոլսից: Նրա համար հանգրվան է գտնում Փարիզը, հանգրվան հետագա ողջ կյանքի համար:

Ю. С. АВЕТИСЯН—Журнал «Цахик» («Цветок») под редакцией А. Чопаняна.— «Цахик» как национальный, литературный и политический журнал, выпускаемый в полмесяца, редактировался А. Чопаняном с марта по октябрь 1985 г. Журнал оказал значительное влияние на западноармянскую периодическую печать и на развитие литературно-художественного мысли в целом, обусловил возникновение литературного движения «ценителей прекрасного» («геганапшт») в конце XIX века. Все это во многом определило дальнейшую литературно-публицистическую деятельность А. Чопаняна.

²⁵ 1895 թ. գրաքննության արգելքի պատճառով «Մաղիկում» առհասարակ չափածո ստեղծագործություններ չեն տպագրվել, հետևաբար նույն թվականին (ինչպես հիշում է Չոպանյանը), հանդեսի խմբագրություն ուղարկված Թ. Զարդարյանի, Արտ. Հարությունյանի բանաստեղծությունները մնում են անտիպ: Պրանց մի մասը հետագայում տպագրվում է «Անահիտում» 1929, ՄՄ 1, 2, 1934, Մ 5—8:

²⁶ ԳԱԹ, ԱԶՖ, № 807—813:

²⁷ Անահիտ, 1901, № 2, էջ 41: